

ՔԱՏԱՆՈՐՈՒՄ ԱՆՐՈՒԹԻՒՆ
 Պոչտային համար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆՏՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք նս չեն տուիր
 —)(—
 Իրանուցեան տողը 20 սան-
 րիւմ է. Լրեխեան աւելի սան-
 րակներու համար 20 Օլո
 գեղը կը լայնայ :

ՇԱՐՈՒ

Նամակ եւ դրամ դրկել
 Խոհարարութեան հասցիքին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄԻ ԶՈՐԵՔԵԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՈՒ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ.

ԱՐԹԻՆ ՓԱԾԱ

—)(—

Անցեալ համարով ծանուցած էինք թէ՛ Տրդատ այէյ Տասեան, իր հօրեղբոր՝ Արթին փաշային տարած էր Հայ. Յեղ. Դաշնակցութեան պատասխանը իմաստին այն առաջարկին զոր ամիսներ առաջ ըրած է փաշան՝ ազգային ինդրին մէջ իրաւաստութեան մը յանգեալու համար :

Ի հարկէ, վայրկեան մը իսկ մտքերնուս չենք կրնար սնցոնել թէ օտմ. կալստութեան ամենակարեւոր մէկ պաշտօնատարր ինքի գլխուն առած ըլլայ այս քայլը, առանց բարձրագոյն տեղէ մը մղուած ըլլալու :

Միւս կողմէ, այնքան ալ միամիտ չենք որ առանց վերապահութեան հաւատանք, թէ թուրք կառավարութիւնը այս գիմումը ըրած առեւ մէկդի թողած է իր դարաւոր համբաւը կազմող նենգամտութիւնը :

Սակայն, շատ աւելի հեշտ է Պատրիարք մը, առանց որ մը խաբել խաբիւրել այլ եւ այլ վազաքէլ միջոցներով, քան յեզափոխական ամբողջ կազմակերպութիւն մը, որ, որքան ալ քննադատուի՝ կարգապահ, անձնաշէն և համերօշխ բանակի մը սպասարարութիւնը թողուց, և իր յանդուգն քայլերով ապացոյցուց թէ զանցաւելի քանակութիւն մը չէ, և մանաւանդ ա՛լ աւելի վերագովիչ հանգամանք մը կրնայ ստացած ըլլալ վերջին անցյեւրու փորձառութիւններով Ս. Կոստի. առանց սեղեկութիւն ունենալու արուած պատասխանին վրայ, չենք տարակուսիր թէ կարող, կորովի և բացարձակ ըլլալու է :

Ինչ որ ալ ըլլայ այս գիմումին արդիւնքը, բանակցութիւնը ինքնին հայ հասարակութեան համար պերճախօս և յուսադրիչ դուռ մըն է, որ իրեն կը սորվեցնէ թէ պատրիարքէն վեր. ոչ ու կոծերէ աւելի ազդեցիկ յենարան մը ունի իր տուն. յեզափոխութիւնը :

Իրանեք անոր յարգը :
 Մեզմէ շատերը, դաւաճան,

փառասէր, խաբեբայ անձերու թելագրութիւնով, ազգային բուրբ դժբախտութիւններու ս՛ղբնադատաճառ յեզափոխութիւնը դուռն : Զանային յեզափոխականը իբր բարիս մը ներկայացրին, իբր չարիք մեր ազգային կեանքին մէջ, չուզելով ըմբռնել թէ անպայման անձնազուտութիւնը անխելի համոզման մը արդիւնքը միայն կրնայ ըլլալ :

Փողոցային մէկէ աւելի թերթեր ունեցանք, որոնք կանաչի թափով մը կացինն ու տապարը ստած՝ քանդել վորձեցին, այնքան զոհողութիւններով առաջ եկած, և Քրիստոսի Եկեղեցիին պէս սուրբ արիւնով նուիրագործուած ազգային փրկութեան միակ ապաւէնը : Ա՛յ ոք չերթ մնաց իրենց թունուոր նետերէն. և և թէ Բարկէն Սիւնի մը ոչ չմնացած ըլլար, ինք ալ հասարակ շարագործներու շարքը դառուելէ ազատ պիտի չըլլար :

Եւ իրենք, այդ քոտոտներն էին որ հինը քանդելով, նորը պիտի հիմնէին . . .

Ատիկա անշուշտ աւելի դժուար գործ էր քան սրճարանի մը ան լենը, ամսթախի հայհոյութիւններով լի երես մը թուղթ մրտելը : Իրենք ալ համոզուած էին այդ բանին, ու ատոր համար է որ այդ զուտամէլները իրենց մըծ ազգադաւ պայտարին մէջ, նոյն իսկ իրենց գանկը ջախջախեցին զայն զարնելով ու զարնելով յեզափոխութիւնը ըստած ամբողջու շէնքին պարիսպներուն :

Թուրքը այս խնդրին մէջ յիտակը մեզմէ շատերէն աւելի հեռատես կերեւայ. փորձով համոզուած է թէ իր երկրէն ծագած յեզափոխութիւններէն և ոչ մէկը ազգային ելած չէ, սակայն ալ վարձատրուած են անդու անձնուրու թեան, յարատեւ կամ ի և զոհողութեան մըրցանակով. ազատութեամբ :

Ատոր համար է որ ամենէն աննշան յեզափոխականը, և որպէս կան կծու ծանուցողք մը աւելի կը վախցնէ զինքը. ու յեզափոխական լուրջ կազմակեր-

պութիւն մը իր քունը կը փախցրնէ : Զարիքը փոքր է, բայց մանախտի միբրոպին ազդեցութիւնը ունի. անսեռանելի է, խուսարող է ուրուականի մը պէս, բայց ասոր հպմար նուազ վստահատար չէ : Ուստի թուրքը այսօր Տրդատ պէյ մը ճամբայ կը հանէ, վաղը Բէլէկեան մը կամ Պիւլպիլեան մը. և սակայն բոլոր այդ պիւլպիլները անչօր պիտի ըլլան այդ ինք մը ցուցնելու, զորմը քանդելու : Գործը անքանդելի է, և անպարտելի պիտի դառնայ, և որ ամբողջ հայ ազգը, այս ձախողումներուն մէջ ցոյց տալով իր անվհատ հոգին, երկաթէ կամբքը, երկուրտուէրներով փարի իր յեզափոխութեան, նոր ուժ, նոր կենդանութիւն տալով անոր :

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱԻՐ

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

ԳԵՐՄԱՆԱՅՈՒ ԿԱՐՄԻՔԸ

Թէ հոչա՛ աւոր Գէօթէի ու Նիլէրի հայրենակիցները բոլորովին զուրկ էին մարդասիրական զգացմունքներէ այդ վաղուց մեղ յայտնի էր : Վերջին օրերս ռուս Ս. Պ. Վէլզոմսիւն լրացրի տալանդաւոր աշխատակից Պ. Գոլտերմ մի չափազանց խիստ, կծու յարձակողական յողում էր գրել Վիլհէլմի դէմ նրա համար՝ որ գերմանական ազգի պետը գրքկախառնվում էր դահճապետի հետ : Պ. Գոլտերմ մտաւորապէս յստիւնում էր այս միտքը. զվելի բան է քաղաքական գծում շահերի համար Քրիստոնէութիւնը շահագործել, և աւելի ստոր բան է, միևնոյն նպատակով Քրիստոնէութիւնը ստորի տակ տալ, և համբուրել քրիստոնէական արիւնից ծովեր ստեղծող Սուլթանի հետ : Ներսնը և թէ քրիստոնէական ին հալածում էր, քրիստոնէայ չէր այսօր Վիլհէլմը աւելի վատ գեր է կատարում, քան Ներսնը : Զը պէտք է թոյլ տալ քրիստոնէութիւնը ստեղծելու անել այդ պէս ստոր կերպով :

Փրանսիական յաղթելուց յետոյ՝

գերմանացիները դարձան քաղաքակրթված գազաններ, նրանց սիրտը ցաւ չզգաց ոչ մի հալածված ժողովրդի համար : Ինչու մարկի արիւնուշտ ոգին խոր արմատ ձգեց ժողովրդի բոլոր խաւերում, նոյն իսկ գերմանացի կիները, որոնք հոչակված էին իրանց զգայնութեամբ, հրապուրվեցին արիւնի հոտով : Մօտ մանակներս մի գերմանացի վարժուհի, կանանց խաղաղասիրական ժողովում, ճատագովեց մի լիտարիզմը և արեան հեղումը :

Բնական էր, որ այդպիսի մի ժողովրդի միջից զուրս կը գար մը գերմանացի որը կը յայտարարէր. «Թուրքերը լաւ արին որ հայերին կռուրեցին, որովհետեւ հայերը շահագործում են «ժող» և «անտարբեր» թուրքերին :

Զարմանալի չէ. այս սողերը զուրս են գալիս աւետարանական և քաղաքակրթված ժողովրդի զուտակ բերանից . . .

Իմ կարծիքով մարդ այսպիսի մի դէպքում կարող է գալ երկու եզրակացութեան. այն է կամ աւետարան և զուրան իրանց բարոյական ոգով իրարից չեն տարբերվում, կամ թէ մամանակակից ամենահին աւետարանական ազգը ոչ թէ մարդասէր քրիստոնէայ է, այլ աւետարանական գաղան :

Մենք ընդունում ենք վերջինը և արհամարհում այդ տեսակ աւետարանականներին, և ասում թողէք աւետարանը, այնտեղ գազանական զգացմունքներ ունեցող մարդկանց համար ոչինչ չը կայ . . .

Վերջէք զուրանը և փոխանա՛ Երուսաղէմի գրայէք Մէքբա և Մէգիլնէ :

Սակայն մենք հուսաւում ենք որ Գերմանիայում, բացի կեղծ քրիստոնէականներից, անսիրտտիպ լոմատներից և ոսկու համար հոգի ու պատիւ զոհող զս սակարգից՝ կայ և մի ուրիշ տարր, այն է բանւոր դասակարգը, որը նոյնչափ ստում է Վիլհէլմերին, Սուլթաններին և Իրամարկներին որպիսի և մենք : Եւ հէնց այդ

տարրի համար է որ մենք թոյլ
չենք տալիս մեզ առել և արհա-
մարել ամբողջ գերմանական ազ-
գը :

ՎԱՐՇՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 2 նոյր.

Բարթոլոմէոս եւ Նուրբան նորէն
հրապարակ ելած են եւ կողմն Վար-
շոթեան մէջ սողոսկիլ. որովհետեւ
արդի վարչութեան երկամեայ շՐԲ-
շանը լրացած է. Թէպէտ յայտ ալ
չկայ որ նորէն երեսփոխանական ժո-
ղով գումարուելու արժօնութիւն
արուի կատարութիւնն : Արդի
վարչութեան ընթացքէն զմզմոս ըլլա-
լու շատ պատճառներ կան, բայց
բազմաթիւ Նուրբան-Բարթոլոմէ-
ոսեան դաշնակցութեան քիչ մը
գոհ ըլլալու պատճառներ կան :

Մէկ քանի օրէ ի վեր սխուր լու-
րեր կը հասնին Բաղնջէն : Կուսակա-
լութեան շրջակայքները նոր կոտո-
րածներ տեղի ունեցած են, որուն
համար կատարութիւնը հետեւեալ
բացատրութիւնը կուտայ. «Սերտիքէ
անուն յեղափոխական մը կար այն
կողմերը որ, հարկը հողոյ չափ իր
գլուխը հաւաքելով ասպատակութիւն-
ներ կը ներ. այդ անձը եւ ընկեր-
ները փնտռուեցան եւ սպանուե-
ցան» :

Բայց այդ ընկերները բոլոր այն-
քան ընդարձակ սահման մը ունի
որ, ամբողջ գիւղեր կրնան կոտոր-
ուիլ անպատասխանատու կերպով :

Օրմանեան Պատրիարքը իր լարա-
խաղացի դերը կը շարունակէ կատա-
րել, նոյն իսկ ներքին եկեղեցական
խնդիրներու համար ալ անտարբեր
կերեւի : Կրօնափոխական շարժում-
ներու դէմ ո եւ է միջոց ձեռք չէ առ-
նուած եւ նոյն իսկ Կրօն. ժողովոյ
որոշումներն ալ չեն գործադրուած :
Հիմա ն. Սրբազնութեան զլխաւոր
զբաղումը Մշակի Պոլսոյ թղթակցին
ով ըլլալը իմանալն է : Առաջին ան-
գամ դէմը ելլողին կը հարցնէ.

—Մշակի Գիրուկը կը ճանչնա՞ք :
Ստոյ խնդիրն ալ որ իր բարձր
գիւնանագրութեան զոնուեցաւ, զես
ո եւ է կերպով չէ կարգադրուած, չը

նայելով որ կրկնիկոյ թեմական քա-
մաց կամաց կատարի կըլլան :
Մայր-Աթոռն եկած լուրերն ալ
գոհացուցիչ չեն. իրողութիւնը այն
է որ Ս. Հայրապետը ո եւ է ազդու
դիմում չէ ըրած ուրախական կատար-
ութեան մօտ զպրոցական խնդիրնե-
րուն համար :

Այս ամենակարեւոր եւ կենսական
խնդիրը այլ եւս կարստեան մատ-
նուած է եւ զպրոցները հետզհետէ կը
յանձնուին : Կէսրգ եւ Մակար Կա-
թողիկոսները իրենց զիմուներով
պետական սանձադութիւնները արգի-
լած էին : Կը հարցնենք թէ ի՞նչ
կարգի ու մով զիմուները ըրած է Կա-
թողիկոսը : Բայց զիտեղք որ ն. Վե-
նափառութեան սկզբունքը եղած է.
«ուղղուն առ», ըլլայ այն զբամ,
ամուսն, եկրկնագրութիւն, եւ այլն :
Բայց թող ներսի որ զիտեղք սանք
թէ զպրոցները ազգին կը վերաբերին
եւ հետեւեալ անխնայ անխնայ կը ըլլայ
երբ իր իր գոյքը կը գործածէ : Կու-
սոյ մէջ մեծ զգոհութիւն կայ այս
անտարբերութեան համար, մանա-
ւանդ որ հաստատուած է թէ նոյն
ինքն Ս. Հայրապետը կոնդակներով
պատուիրած է աշխարհական իշխա-
նութեանը՝ որպէս զի զպրոցական
կալուածները կրթական նախարա-
րութեան յանձնեն : Հիմայ Ռուսոյ
հայերն են որ փոխանակ կաթողի-
կոսի կը պաշտպանեն իրենց զպրոց-
ները : Կաթողիկոսի բոլոր զիմուած
այն է որ, կայսեր հետագիր մը քա-
շած է ամբներ առաջ, որուն պա-
տասխանուած է կրթական նախարա-
րութեանն թէ՛ «ձեռն զիմուած չէ ըն-
դունած կայսրը» :

Ռուսահայք կը հաւատան թէ կայս-
րը չը զիտեղք անցած զայձածը. պէտք
չէ՞ միջոց մը խորհիլ խնդիրը ուղ-
ղակի կայսեր ներկայացնելու :

ՆԵՏ

Թաւրիզ, 30 Սեպտ.
Կսակներ եւ զպրոցներ

Ուրախ ենք ընթերցողներին ա-
ւետելու, որ իրա հարստութիւնը
կատարով թողած մի հայի վերջին ժա-
ռանդ թողը վերջերս վախճանելով,
մտա 10,000 բարբի հարստութիւնը
մնում է թաւրիզու Ղաւայ թաղի երկ-
սես զպրոցներին :

ՎԱՐՇՈ-ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (48)

Այդ օրը երիտասարդ բարե-
կամեցող մէկը մի սրտառու
տոմսակ հասցրեց ինձ շնորհաու-
րելով իմ աչառութիւնը, և նե-
րողութիւն խնդրելով որ չէր կա-
րողանում զալ ինձ տեսնելու՝ հա-
մոզուած լինելով որ կը լրտեսովի
Գիշերը գրեթէ չկարողացայ քնել.
Թէ ուրախ էի և թէ արտում :
Ուրախ էի որովհետեւ թուրքե-
րի ձեռքից ազատվեցի, արը-
տում նրա համար, որ կուտա-
ծում էի ուսնեցից, համոզված
էի որ նրանք ինձ պէտք է պա-
ծեն, բայց չէի կարող որոշել
պատժի տեսակը և չափը :

Վերջապէս լուսացաւ : Զատիկի
կիրակի օրն էր : Մաքսիմովը այ-
ցելեց ինձ, շնորհաուրեց Զա-
տիկը և խորհուրդ տուց զրոյն
հետ յարաբերութիւններ չսկսեմ :

աւելով թէ տաճիկները լրտե-
սում են, կարող են իմանալ. իսկ
զեռպանագոսներ խոտապել է ձեզ
փակած պաշել : Գուր տաճիկական
հոգից զուրս էք համարում :

Մի քիչ յետոյ ծառան եկաւ և
ինձ հարցրեց—մի պարոն ու-
ղում է ձեզ տեսնել. միայն այն-
պէս անենք որ ոչ ոք չը բռնի,
ո՛չ ուսնեցից և ոչ թուրք կա-
ւաչներէր :

Ինձ տորաւ մի բաւական մա-
քուր սենեակ : Սյուտեղ կար մի
չառ համակրելի երիտասարդ և
բոլորովին անձանթով. ես չկար-
ծեցի որ այդ պարոնն էր ուղում
ինձ տեսնել : Նստեցի աթոռի
վրա յուսալով որ ինձ կանչող
մարդը շուտով կը գայ : Մի քանի
րոպէ անցաւ, բայց մարդ չէր
գալիս. սենեակի դուռը բաց
արի, ծառան աղտեղ հսկում էր,
և հարցրի :

—Ո՞ր է ինձ կանչող պարոնը :

Կտակող վախճանեալ Ասատուր
յաճախ Անգլիա այցելած լինելով,
ժողովուրդը նրան Լոնդոն Սահաբ
ազգանունն էր տալիս եւ նրան այս
ազգանունով էին ճանաչում : Նրա
կտակի արամադրութեան համաձայն
Անգլիերէն լեզվի դատաւանդութիւնը
պարտաւորիչ պէտք է լինի, եւ ար-
դէն նոյն զպրոցում աւանդում էին
հայերէն, ուսերէն, պարսկերէն եւ
ֆրանսերէն լեզուները . . . :

Մեր հայ պատանիները լեզուներ-
բից դուրս բան սովորելու միջոց չեն
ունենալու . . . :

Գրողները մասին ուրիշ անդամ
կը խօսիմ :

Ղաւայի զպրոցը մի քանի սարուց
յետոյ ժառանգելու է նաեւ 1,000
թուան (5,000 ֆրանք) : Տիկին Գրէն-
ֆիլդ որ մի պատու կ'իւն է. վերջերս
կտակել է նոյն զպրոցին 1,000 թու-
ան իրա մեծնելուց յետոյ վճարելի,
իսկ մնացած ամբողջ հարստութիւնը
4,500 թուան թողել է իրա միակ
թոսար, որի վախճանելուց յետոյ
դարձեալ մնալու է զպրոցին :

Անցեալ տարի վախճանվեց մի այլ
հայ հարուստ՝ Մնացական Տէր Յա-
կոբեան, որը բացի այլ եւ այլ հաս-
տատութիւնների փողի կտակելուց,
կտակել էր նաեւ 100 թուան Բայ-
տակարանում մի զպրոց բաց անելու
համար :

Նոյնպէս, քաղաքումս գործող ե-
րեսնցի հարուստ հայ վաճառական
Ափրիկեան եղբայրները ներքին են
որ եւ է մի գիւղում մի զպրոց հազ-
ու հարկաւոր դրամը :

Այս տարիանից պէտք է չորս զբա-
րոցներ բացվեն թէ Բայտակարանում
և թէ Բարանդուզում (Ուրմիոյ մօտ)
«Թաւրիզի հայուհեաց բարեգործական
ընկերութեան» հսկողութեան տակ :
Բայտակարանում բացվելիք երկու
զպրոցները մինի ծախսը հոգացվելու
է Մնացական Տէր Յակոբեանի կտա-
կով. իսկ միւսը հոգալու են յայտնի
վաճառական թումանեանց եղբայր-
ները : Բարանդուզում էլ պէտք է
բացվի երկու զպրոց, մինի ծախսը
հոգացվելու է Ամերիկեան եղբայր-
ների նէքնելով. իսկ միւսը վերո-
յիշեալ կանանց ընկերութեան օգ-
նութիւնով : Կանանց ընկերութիւն-
ների մասին այլ ասելու :

Թաւրիզու շրջակայ Մուսամբար
գիւղում էլ այս տարի բացվելու է մի

զպրոց, նախաձեռնութեամբ եւ ժառ-
նաւոր հոգածութեամբ Միրզա Աբրա-
համ Փանուէրեանցի, հայ Զօլայիկ-
բոր . . . :

Այս անհատական ջանքերն, այս
բարեգործական կտակներն են, որ
պիտի ապահովեն պարսկահայերիս ա-
ռաջադիմութիւնը, մտաւորական
զարգացումը. եթէ չը լինէին սոքա,
պարսկահայերից չը պէտք էր սպասել
սր եւ է առաջադիմութիւն, որ եւ է
զարգացում : Թանձր խաւարը, որի
մէջ թաղուել էինք, պէտք է մշա-
տեւ պատէր մեր հորիցորն, Հասա-
րակութիւնը չէր արամադիր, և
զուցէ չէր էլ կարող առանց կտակ-
ների օգնութեան բարեկարգել իր
զպրոցները, իրա ազգային հաստա-
տութիւնները :

Կտակակատարները միշտ օրհնեալ
են եւ օրհնեալ են լինելու ցյալու-
եան. մաղթենք, որ նրանք ունե-
նան իրանց հետեւողները :
ՄԻՐԶԱ

ԿԱԽՎԱԾ ՀԱՅ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԳԵՆԱՍԱԿԻՆ

(Ազգայնագիտական հարցազոյս)

Մայրիկ—անո՞չ հայրենիք. ինչո՞ւ
ես այդպէս աղի աղի արտասովում.
Իսկ դու աղտաւ. անթիված թոյնու.
ո՞ւմ զագաղի վրա ես զոգոում . . .

Հա, գրեւէմ, մայր երկիր, ինչու
ես լալիս, որովհետեւ անաէր ստրուկ
ես, քո հեծեմանք ոչ ոք էլ չէ լսում
և ոչ ոք էլ քեզ օգնելու չէ վաղում . . .

Քու քաղաքներից մէկի մօտ, տե-
սայ, կանգնած է կախաղանի անարդ
սիւնը, եւ քո աչիւլու զաւակներից
մէկն էլ կախված է նրա վրա . . .

Ազուրը դուռ է մահազոյժ ձայ-
նով, շուն ու գայլ ոտնում են դաշ-
տերում, թոյլ ձերերը աղօթում են
Աստուծոյն, կրկնը ողբում են, մա-
նուկները ճչում . . .

Շուրթը պաղ մահ է չնչում, գալ-
տում վզում եւ սուլում են բութ
ու քամին . . .

Թէ ցուրտ, թէ վիշա և թէ լաց
անյոյս, իսկո՞՞ հայրենիք, քո խոցո-
սիրտը բոլորովին սղի մէջ են թա-
ղում . . .

ՎԱՐՇՈ

Նուհետեւ էլ մարդ չտեսայ. եր-
կու շարթի օրը հիւպատոսարանը
ինձ յանձնեց Ռուսաստան գնացող
չողենաւի նաւապետին :

Եւ ես ազատվեցի վագրի ճի-
րաններից, արշի որջը ընկնե-
լու համար . . .

Արջերին լաւ էի ճանաչում,
զիտէի, որ ինձ այնքան էլ չէին
չոյելու : Բայց չէի սպասում, որ
չառ էլ խիտտ պէտք է լինեն,
զրա համար էլ բաւական խաղող
տրամադրութեամբ նաւ նստեցի.
մի կողմից էլ ինձ համար մեծ
բաւականութիւն էր որ թուրքե-
րը, շնորհիւ ուսուսպատակու-
թեան, չը կարողացան ինձ խոս-
քով անգամ վերադարձիլ իմ մարդ-
կային և զաւաճաբական կուղի
արժանապատուութիւնը ազատվեց
տաճիկ թէ մեծ և թէ փոքր պաշ-
տօնեայի արհամարանքից . . .

(Ճարտեակից)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԷՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Մայրի աղբ հիանալի օրերին, առաջին անգամ ժամու վր, այնքան տարօրինակ տպավորութեանց ու անմահական բուրմունքով որդուած ուրտուի մէջ, բնութեան հրաշագեղ չքնադու թեան շուրջ, հայրենիքի Ս. հողէն բխող զուլալ կաթնազրիւրի քով, ծաղիկներն ու կանանչներն մէջ թաղուած, «խղիւսիւն» արածայող մաքուր կաթով թէյ խմելը, կեանքի մէջ այնքան ցանկալի ու այնքան անուշ է, որքան անհամեմատելի աղբ երեւոյթը իր սեսակին մէջ:

Հեշտաեան քանի մը անգամ կը լեցուի ու կը պարպուի. մենք ու մեր հիւրերը չենք կշտանար, ու վերջապէս ազգային ամենատար խօսակցութեան տարափէ մը եւ ք կը սկսինք երգել Պէշիք թաշլեանի «Կու՛ր փափկաթեւ մանկիկ զեփիւս, աղբերց վրայէն լուսակարկալ՝ ունուշ հոտով ծաղկանց սիրու, ինչպէս թոզի միջ ընդ առաջ, ու խունկ ու զով ընծայելով, մեղուչունես անուշ շնչով», ե այլն, ե այլն, սրտի երգը, որմէ վերջ՝ ոտքի ելնելով հայրենիքի ինքնատեղ պատակ, Տուտուխան, իր գրական մարդու կատարել իրազանութեամբ հողերան իմաստասերի մը գիրքով բռնելի ռճով, ազգային կեանքի հեռապատկերը՝ իր պէսպիսութեամբ այնքան գեղեցիկ ու այնքան ճշգրիտ կը նկարէ, որ մենք ամենքս ալ էք հեռանկարային միթար կացութեան յեղաշրջման միակ միջոցը գարոյնների բարեկարգ յառաջացման ու գաղափարների յեղափոխման մէջը կը համոզուինք որունել, Կաղափարի աղբ յեղափոխական շինականի աղան շատ զբաղան կը գտնէք այն միջոցը՝ որ վերակ հայուն հոգաւոր լինելով կը կայանար: Մեր բարոյական ուժին հետողէք է որ հողային անշարժ ուժ մըն ալ ստեղծենք, որ եթէ օր մը ընդհանուր արկած մը պատահի, մեր անագորուն թշնամին մնցի լուսաւ չը կրնայ մերկացնել: Ոսկի, արծաթ, բազմաթիւ անասուններ, համբաւաբք վաճառականութիւնները կրնան մէկ աղբի թարթի մէջ, այսպիսի գաղանաբարոյ կառավարութեան մը (թուրքի) իշխանութեան ներքին ոչնչանալ, ու բիւրաւոր կեանքներ փճանալ, բայց հողային անշարժ հարստութիւն այնքան շուտ կորսուելու հաւանականութիւն չունենալով հանդերձ, եթէ անոնք բնութեանց բաժին ալ լինին. օր պիտի գայ որ անոնք իրենց նախկին տէրերին սեպհակահանութիւն ըլլալու վաւերականութիւնն ունենան: Ու այս ամէն իրական պատկերներն մէջ, ընկերական ու մտա-

որ կեանքի գիտական վերածնութեան անգամադրելի պէտքը՝ որ կը անհնազանդ մեր հայրենիքի, մանաւանդ ներքին պաւառներն մէջ՝ խոր կսկիծ մը սեմիտք մաշող մտածում մը յառաջ կը բերէին մեր մէջ: Ու մեր այդ ամենէն ուրախ եւ երջանիկ նկատուած վայրկեաններն ամենուս մտքերը կը շարժարուէին մտածումների ամենէն խորունկին ազդուութեամբ:

ՆԱՀԱՊԵՏ

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Գիտենք թէ «ձէրիտէի Շարգիէի» անօրէն Տ. ձիվէլէկեան «Սուրհանդակ» անունով թերթ մը հրատարակելու վրայ էր Արգ՝ «Մշակ» Պոլսոյ թղթակիցը կը հաղորդէ թէ «Սուրհանդակ» լրագրողներէ այն պատճառով որ սուր, հան, գակ (սուրը հանէ թաղմիշ րրէ) բռնուրը պարտականութիւն, կրնայ եղբ միաբերը գրողներ: ձիվէլէկեան հարցաքննութեան ենթարկուեր ե զժուարութեամբ կրցեր է օձիքը ազատել Հիմա, «Սուրհանդակ» տեղ «Բանբեր» պի ի հրատարակուի:

Պոլսոյ լրագրողներուն արգելուեր է «գաւառական սուրհանդակ» գործածել. թղթակիցը բարձր գաղտնի է սուրհանդակին: Կը կասկածինք թէ այդ ստահակութիւնն ալ լրտես Արմէն Լուսինեանին գործը եղած ըլլայ:

Սուրհանդէ հասած լուրերը կը հաղորդեն թէ՛ երկու ամէն ի վեր այն տեղի հայերուն կացութիւնը դարձեալ վերիվայր յազուած է: Տեղական իշխանութիւնը երեւակայական հայ «զաշխներ» պատրուակ բռնելով, հաղարուոր թուամաններ կը կորդէ եղբ արլունագամ ժողովրդէն:

Էլ միտածնի Սինոգիին կողմէ հրահանգ գացեր է թիֆլիզի առաջնորդին, թաղի աւագերէցներուն խտաիւ պատու իրելու, սրպէս զի գրաւուած գարոյններուն վրայ հսկեն ու շի ու շով՝ ի մասին կրօնական դատարարականութեան ե հայ լեզուի ուսուցման: Եթէ օհէ թերութիւն տեսնեն, իսկայն իմացնեն Սինոգիին... որուն խնդրը նոր գլուխը եկած ըլլալ կը թուի:

Բարիկէն կը ծանուցանեն թէ Ալաշկերտի Լոնճալը գլուկէն քանի մը ամիս առաջ ձերբակալուած հայերէն ու թ հողի ազատ արձակուել են:

Կեանքի միջոցով վեհապետական ընտանիքին Ս. Յակոբայ վանքը ըրած այցելութեան առթիւ, Երուսաղէմի Տ. Յարութիւն Պատրիարքը յոյժ կենցաղազէտ մը ըլլալու ապացոյցը տուեր է, կայսրուհիին նուիրելով չին կորուրար մը որուն գեղեցիկու-

թեանը սքանչացած էր կայսրուհին: Վիլհէլմ Բ. խոսաացեր է Պերլին վերագարձին իր ե տիկնոջը իւզաներկ պատկերները զրկել մեր վանքին, ուր կը զբոսնուին արդէն իր պապին ե հօր պատկերները:

Սմբրկայի հայոց առաջնորդանիստ կեդրոնը պիտի ըլլայ Սուտր, զի հայերը հոն միայն ունին եկեղեցիի յատուկ շէնք, յանուն Ս. Փրկչի: Սմբրկայի հայոց առաջնորդական վիճակը բաժնուած է եօթը թեմերու, որոնց կարգաւ պիտի այցելէ նորընտիր առաջնորդ Տ. Սարաճեան Եպիսկոպոսը:

Ինուսի մէջ Համիտիէ հեծեւազորաց յատուկ զօրանոց մը պիտի շինուի օգուէտ գեանի մը վրայ, զոր նուիրեր է տեղացի հայ մը:

Տիֆլիսի Թանդոյեան ճկեղեցիին նախկին հայոց ծխական եկեղեցական գարոցի շէնքը, որ անոք գաղթականներու իրելու հիանդանոց կը ծառայէր, վերջերս ուս կրթական տեսչին որոշումով դրուել է, ե հիմա, ամէն ազգէ ուսանողներու յատուկ գարոցի պիտի վերածուի: Խեղճ հիւանդները կը հեռացուցուին:

Նով. Վրէմիաի կը հազորդին թէ վերջերս Լոնտոնի մէջ տեղի ունեցեր է երիտասարդ թուրքերու մեծ ժողով մը, որուն մէջ եռանգուն մասնակցութիւն մը ունեցեր են նաեւ հայերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Թ Ո Ւ Ր Վ Ի Ա

Կ. Պոլսէ «Թան» կը գրեն: Ամսոյս Յին հեռագրած էի ձեզ թէ պետութիւնները իրենց ուշադրութիւնը փոխադրած են Մակեթոնի վիճակին վրայ, Անոնք կը կարծեն թէ ասանը եկած է լրջօրէն խորհուլու այն վտանգին՝ զոր կը ներկայացնէ Եւրոպեան խաղաղութեան համար, անիշխանական վիճակը ուր կը գտնուի Մակեթոնիան, ե առաջին անգամ պայթումի մը, որ եթէ տեղի ունենայ, կրնայ ամենէն ցաւալի հետեւանքները պռայ ընել: Եւրոպական թուրքիոյ աղբ մասին մէջ չափազանց աստարներ խաղի մէջ են, ե թուրք կառավարութիւնը կարծես թէ ճշգիւ չբմբռնի իրեն սպառնացող վտանգը: Չբմբռնի որ եթէ Մակեթոնիոյ խառնաշփոթ վիճակին կարգ կանոն չընէ, այս գաւառը սահմանուած է Կէտէի վիճակը ունենալ, ե թէ՛ այն 180 վաշտերը որոնք հոն կեդրոնացած են, չպիտի կրնան արգիլել Եւրոպեան որ Եւրոպական Թուրքիոյ թողու միայն ե միմիայն Ա. Պոլսի գաւառը:

Իր գործելու եղանակովը, Թուրքիան Մակեթոնիոյ քրիստոնէսյ ազգաբնակչութիւնը, այ-

սինքն՝ կաթոլիկ ալպանիացիները, սերպերը, ուսմանագիտները, պուլկարները, բուլղարները ե յոյները կը նմանցնէ Փոքր Ասիոյ հայերուն: Եւ սակայն տարբերութիւն մը կայ ասոնց մէջ: Իրաւ է թէ՛ երկուքն ալ թրքահայատակ են, թէ՛ հայերը ե թէ՛ Մակեթոնիոյ քրիստոնէսայները, բայց առաջինները պատակուած եւրոպայի դիմում կընեն ե հետեւաբար անգոր են, մինչդեռ վերջինները ուժ ե օգնութիւն կը գտնեն իրենց ցեղակից եղբայրներէն:

Տեսանք թէ ինչ ըրին պուլկարները ե ուսմանագիտները իրենց Մակեթոնիոյ եղբայր համար, հիմակ ալ կը դիտենք սերպերուն բռնած զիբը Թուրքիոյ հանդէպ, ազատելու թրքահայատակ սերպերը ալպանիացիներու ձեռքէն: Իսլամ ալպանիացիները իրեն գէմ հանելու վախէն, Սուրթանը կատարել ալպատութիւն թողած է անոնց, այնպիսի առանձնաշնորհումներ՝ որոնք մէջ մէկ նախատինք են քաղաքակրթութեան: զէնք, զգեակազիւրար բղկտելու իբառունք, վերջապէս միջնադարեան աւազակութեան ճշմարիտ գրութիւն մը: Սուրթանը գիտէ թէ ալպանիացիները ամենէն կարող մարդիկն են դաւադրութիւն մը կարգելու ե զայն գործադրելու: ուստի թէ մտէն ե թէ հեռուէն անոնց հետ կը վայրուի սիրելի զաւակները: պէս ե խիստ պատուէրներ, արուած է Ալպանիոյ պաշտօնէտութեան, բնաւ ու է առթիւ շեղացնել այդ քաղաքի ալպանիացի հպատակները:

Այս պատճառով է որ Ալպանիոյ միւսիւրները ե միւթէսարիֆները պաշտօնէն կանուանուին ե ուղղակի անոր հետ կը հաղորդակցին: Ասոնք հիանալի կը բազմակը համաձայնին ալպանիացի պետերու հետ, ե բնաւ կարեւորութիւն չեն տար ոչ ընդհանուր կառավարչին, ոչ ներքին գործերու նախարարին ե ոչ իսկ Մեծ Եւրոպոսին հրահաններուն իշխանութեան բացարձակ չղջուութիւն, կատարել անիշխանութիւն, այս է կացութիւնը: Թրքոստոնեայները կը տառապին, չարիքը օր օրի կուելնայ:

Ռուսիա ե Աստրալ չեն գաղութիւր վտանգը մասնանիչ զնելէ Դրան: Այս վերջինը կը բաւակահանայ խոստումներ տալով զարջը կրնար իրադործել: Բայց ամենէն սոսկալին այն ուժն է զոր խոստանալ իրենց գործած կեղեքումներուն ատեն կը գտնեն թուրք զինուորներէն: Այս պահուս կացութիւնը ալ, աւելի թուսուորուած է կրեակէ վաճառուած թուրք զինուորներուն Եւրոպայի ե Քոստանայի նահանգներուն մէջ լեցուելովը: Իրենց կրտսէ նուաստութեան վրէժը քրիստոնէսայներէն կը լուծեն:

Պետութիւնները որոշած են հաշտարար միջոցներ գործածել նաեւ այս ձմեռ, թուրքիոյ տուն տալու համար որ անհրաժեշտ բարենորոգումները իրագործէ Մակեթոնիոյ մէջ: Եթէ այս միջոցները փափագելի արդիւնք չի տան, յառաջիկայ գարունը դժբախտութեանց նոր թուական մը պիտի բանայ կայսրութեան համար:

Քոստանդուպոլիսի կառավարիչ Հաֆըզ փաշայի տեղեկագրերուն վրայ, որոնք կը հաստատեն Սերպիոյ ցոյց տուած կացութիւնը, բարենորոգումներու նոր ծրագիր մը պատրաստելով Սուլթանին ներկայացուցաւ: Դեռ պատասխանած չէ:

ՔՐԻՍՏՈՍ ԱՆԷՍԻ

Կրէտացիներուն ցնծութիւնը չափ ու սահման չունի: Ամէն օր նորանոր միջոցներ կը հնարեն իրենց ուրախութիւնը յայտնելու համար, թուրք զինուորներուն մեկնման և երկդարեան գերութեան մը ետքը իրենց կղզւոյն սուլթանական սեւ տիրապետութեան վերջնականորէն ազատման առթիւ: Պար, հրապարակային խրատներ, ծովակալներու ուղղուած շնորհակալեաց ուղերձ, երախտագիրտական ցոյցեր պետութեանց, բայց ամենէն սրտաշարժ և յատկանշանական միջոցը ամենօրեայ բարեւի ձևն է որ փոխուած է հիմա: Երբ որ երկու կրէտացիներ իրարու կը հանդիպին, Քրիստոս անէսթի (Քրիստոս յարեալ) կաւետեն իրարու. և իրաւունք ալ ունին, որովհետեւ ճշմարիտ Զատիկը հիմակ է որ իջաւ իրենց հայրենիքին վրայ:

Կրէտէի թուրք պէյերը իրենց մէջ հանգանակութիւն մը բանալով վեց հազար ֆրանք գոյացուցած են: Այս գումարով Եսրիլոս իշխանին ընդունելութեան ծախքերը պիտի հոգացուին:

Կրէտէի բարձրագոյն քօմիսէր իշխանը (այլ եւս այս անունը կրնանք տալ Եսրիլոսի) Քոբէն հակէ Պիրէոն վերադարձած է: Այս օրերս կրէտէ պիտի մեկնի:

Տ Ր Է Յ Ձ Ի Ի Ս

Աքսորականին հիւանդութեան կամ մահուան վրայ շրջած զրոյցները անհիմն են: Սատանայի պէս ողջ առողջ է Տրէյֆիւս իր Սատանի կղզիին մէջ: Իր աստղը հետզհետէ կը պայծառանայ: Վերաքննութեան հարցը լուծուած լինցած է: Վճարեկատեանը որոշեր է լուր տալ իրեն թէ իր դատը կը վերաքննուի և ինքզինքը պաշտպանելու միջոցներ տուեր է անոր: Կառավարութիւնը ընդունեց է վճարեկատեանին այս որոշումը, հակառակ Պ. Պ. Տէրուլէտի և Քալէնեարի, ու

որոնք խորհուրդ տուած էին Պ. Տիւրի մերձել այդ որոշումը:

ՅՐԱՆՍԻ ԵՒ ԱՆԳԼԻ

Լոնտոնի մէջ զրոյց մը տարածուած է թէ ամէն կողմ հրաման տրուեր է որպէս զի պատերազմական պատրաստութիւնները դադարեցնեն: Անգլիական թերթերը և պետական անձերը հիմա սկսած են աւելի մեղմօրէն խօսիլ Ֆրանսիայի վրայ: Պ. Չըմպըրլէն Մանչեսթըրի մէջ վերջերս բանախօսութիւն մը արտասանելով ըսած է թէ Անգլիա, յանուն եղբայրտան, կը պահանջէ բոլոր այն երկիրները որոնք եղբայրտանը իշխանութեան տակ գտնուած են. և սակայն պատրաստ է Ֆրանսայի տալ բոլոր այն գերութիւնները որոնք կրնան անոր վաճառականութեան զարկ մը տալ նեղոսի ափերուն վրայ:

«Իրայմիլ», Ֆաշտաի խնդրին առթիւ, կը թուէ, անգլիական գլխաւորութեան սխալները եղբայրական խնդրին մէջ: Նախ կը ցարթ թէ Ալեքսանդրիոյ ողմբակոմունէն ետքը անգլիայ ինչոյն իր թեւարկութիւնը շտաբած է եղբայրտանը վրայ, բան մը որուն դէմ ո՛չ ոք պիտի բողոքէր այն ատեն. և երկրորդ թէ օրըմբնու-Անգլիոյ պայմանագրութեանը ընդունելով Անգլիա բնօրացած է եղբայրտանը պարտել, որովհետեւ այդ երկրին ելեւմտական կացութեան վրայ ծըղգրիտ տեղեկութիւն չունենալով, չէր համարձակած պարտքերուն պատասխանատուութիւնը ստանձնել: «Երայմիլ» թուելով նաեւ Ֆրանսայի ձեռնբէցութեան արդիւնք՝ Սուէշի շէնքըն Անգլիոյ միջնէն հիմա ըրած 25 միլիոն ոսկոյ շահը, և ուրիշ պարագաներ, կեղքակացիէ թէ Ֆրանսա փոխա, ինքնութեան մը իրաւունք ունի Ափրիկէի մէջ:

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Պաշտօնական լեռնոյ մը համեմատ, հաշտութեան յանձնաժողովին սպանիացի անդամները չպիտի ընդունին Փիլիպպիններու մասին Մ. Նահանգաց ըրած պահանջումները, և իմէ բանակցութիւնները, հաշտութեան ըրօթօթօրին հիման վրայ չը շարունակաին, զաշնագիրը չպիտի ստորագրեն, այլ եւրոպայի պիտի բողոքեն: Արդարեւ ուրիշ բան ինչն ալ անկարելի է հիւժոժ երկրին համար, որ ի հարկէ նոր պատերազմ մը յարուցանելու յիմարութիւնը չկրնար մտքէն անջրնել: Միայն թէ նոյն իսկ Փիլիպպիններու ամերիկացոց թողութիւնը նոր վէճերու դուռ կրնայ բանայ, Մայրաքաղաքի Արեւելքի խնդիրը վերաքննուելով և կոտի մը տեղի տալով, Լորա Սալլիպրիի երկիրներէն մէկն ալ այս է այս պահուս: Որովհետեւ

Ռուսիա և Գերմանիա չափազանց պահանջումներ ունին նոյն կըզգիւն վրայ: Մ. Նահանգները թող պիտի տան Ռուսիոյ և Գերմանիոյ ամուրի կայաններ հաստատել հոն. բայց անգլ. կառավարութիւնը պիտի ստիպէ ամերիկացիները որ աւելի բան մը չտան:

ԻՍՌԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Գերման աւետարանական հովիւ Նաումանի խնդրած մէկ հանդէսին մէջ, գերմանացիի մը հետեւեալ կարծիքը հրատարակուած է հայոց մասին: «Ես քրիստոնեայ եմ և նմանիին սէրը պատուէրն բուն առաջինը կը նկատեմ: Լաւ ուրեմն, թուրքերը շատ ազէկ ըրին հայերը շարդելով: Թուրքը ուրիշ կերպով չկրնար ինքզինքը պաշտպանել ընդդէմ հայուն, որ ստոր կերպով կը շահագործէ անոր ծուլութիւնը, անշահախնդրութիւնը և ուշադրութեան պակասութիւնը»:

Այս տողերուն պատասխանը կարգաւ մեր այսօրուան «Օրը Օրին»ին մէջ:

«Կ. Պոլսէ քաջուած հեռագիր մը կըսէ թէ Մ. Նահանգներու կառավարութիւնը առաջարկեր է Իրան, Պոսոյ ամբրիկեան դեպարտմէնը առաջին կարգի դեպարտմէնի վերածել, պայմանաւ որ նոյն գիրքը ունենայ նաեւ թուրք դեպարտմէնը Ամերիկայի մէջ: Այս գրիմով, որ տեղի կունենայ համանման շատ մը ուրիշ գիմումներէ ետքը, ցոյց կուտայ թէ Ամերիկեան հետզհետէ կը հեռամտի մասնակից ըլլալու առկա մնացած միջազգային խնդիրներու վիճարանութեանց մէջ»:

Թուրք լրագրաց մէջ կը կարդանք թէ կրէտէի բնակիչները մեծ ուրախութեան մէջ են որովհետեւ այս սարի... ձեթապողի հունձքը առատ է»:

Ռուսական դեսպան Պ. Չիւնովիէզ Լիվաթիայէն Պոլիս դարձեր է:

Լուքէնի վեբաքննութեան ղեկավար է:

Թ Ա Տ Ր Ո Ւ Ն

Այս գրիքը, Անկէլ Սլափֆի սրահին մէջ տեղի պիտի ունենայ թատերական շքեղ ներկայացում մը (Եւլի Աշտարակը) ինչպես Վառնայի Աղջկանց կը թարանին:

Ա Ձ Դ

Ի բացակայութեան դոստոյն թատերգի, Պատ. Հայկ Եսարման վաղը երեկոյեան ժամը եօթին պիտի գարողէ սոճկերէն լիգուս:

ՆԱՍՄԱԿ ԱՏՈՒՓ

Ով որ գիտէ Սեղրակ Տ. Գրիգորեանի (Երզնկայի Չարաքիլիսէ գիւղէն) ուր գտնուիր, թող փութայ խմբագրութեան հաղորդել:

—(—)

ԻՄՔԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցեատոմս, նամակագրութիւն, հարսանական հրատարակիր, մահազդ, խնչպէս նաեւ պրօշիւններ:

Գրիւնըն յոյժ դիւրամտուցելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Կառնա 7, ՊՈՒԳՏԱՅ, Կազօն, Լիպրա, Արապ, Լիպրա, ԱՐԲԱ, Լիպրա, ՄԻՍԻՐ, Կազօն, Առապ, Կիւնկէ, ԵՆԻԼԱՅ, Կիւնտէ, ՏԱՐԸ, Կիւնտէ, ՅԱՍՈՒԼԵԱ, Կիւնտէ, Առապ, 100 օգոստը, Առապ մուսկէթախ, Նարբլէն, Ֆրանք հիսապը, Կիւնտէ, Արապ, 20-25 արապ, արապ կէլմէթախ:

ՎԱՐԿՈ

ԵՐԿՈՒՍ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՅԻՈՒԱՆ ԱՆ ԿԵԱՆԻՑ) (Գրին 1 Ֆրանգ) Մնացած սովորաբար օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն Կոչի մօտ. Ռուսաց Վայկ Մախանի սրճարանը, Սօֆիա Տ. Սուշը Արժրոնիի քով: Մտերս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Բոնութեան գոհերը»:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թանկագին Կեօգիլէօյլուքեանի խաւովը, և Ապալեքրահման մզկիթին դէմը հայկական գրատունը: Ա. Չարպանէլիանի քով:

ՆՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ

ԵՐԿՈՒՍ ՍԷՐ ԿԱՆԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻՆ ԱՇԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Գրին 1 Ֆրանգ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը: